Հաշվետվություն 2021-2022 ուստարի

2021-2022 ուստարում ՇՊՀ-ի ավագ դպրոցում սովորել են 193 աշակերտներ: Աշակերտների թիվը նվազել է 2019-2020 և 2020-2021 ուստարիների համեմատությամբ (տեսնել աղյուսակ 1,2,3), պատճառը այն է, որ մեր դպրոցը կարող է ունենալ միայն ավագ դասարաններ՝ 10-ից 12-րդ դասարանների աշակերտ համակազմով: 2021-2022 ուստարում դպրոցում կազմավորվել է 9 դասարան, որտեղ սովորել են 193 աշակերտներ,այդ թվում՝

- 10-րդ դասարան– 58 աշակերտ
- 11-րդ դասարան - 75 աշակերտ
- 12-րդ դասարան- 60 աշակերտ:

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարվա համար

Դասարանների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
6 -րդ դասարան				
7-րդ դասարան				
8-րդ դասարան				
9-րդ դասարան	1	-	-	նվազում
10-րդ դասարան	3	3	3	նույնը
11-րդ դասարան	4	3	3	նվազում
12–րդ դասարան	5	4	3	նվազում
Ընդամենը	13	10	9	նվազում

Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարվա համար

Սովորողների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
7-րդ դասարան	-			-
8-րդ դասարան	-			-
9-րդ դասարան	18	-		-
10-րդ դասարան	60	75	58	նվազում
11-րդ դասարան	99	62	75	աճ
12-րդ դասարան	113	99	60	նվազում
Ընդամենը	290	236	193	նվազում

Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարվա համար

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	288	225	198	նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	290	236	193	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	15	9	18	աճ
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	14	5	6	աճ

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարվա համար

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	43	39	38	նվազում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	21.7	20	17.3	նվազում

Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարվա համար

Ուսուցիչների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	12	12	12	նույնը
31-ից 40 տարեկան	7	7	7	նույնը
41ից -50 տարեկան	13	10	10	նվազում
51-ից -55 տարեկան	6	6	6	նույնը
56 տարեկան և ավելի	5	4	3	նվազում

Աղյուսակ 6. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Դարբինյան Կարեն Սիմոնի	4	4	-
Տնօրենի տեղակալ	Մուրադյան Ինեսսա Սամվելի	2	4	-
Տնօրենի տեղակալ	Չավուշյան Արթուր Աշոտի	2	4	-

Աղյուսակ 7.

2021-2022 ուսումնական տարվա սովորողների ուսումնառության արդյունքների ամփոփ համեմատություն-վերլուծությունը 2020-2021 ուսումնական տարվա նկատմամբ/ մինչև 10միավոր /

Առարկա	Տարեկան միջին գնահատականը 2021-2022 ուստարի		Տարեկան միջին գնահատականը 2020-2021 ուստարի		Փոփոխությունների դինամիկան / աճ,կամ նվազում /	
	9-րդ դաս.	12-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ դաս.
Հայոց լեզու	-	7.7	-	7.3	-	աճ
Գրականություն	-	7.7	-	7.4	-	աճ
Ռուսաց լեզու	-	7.8	-	7.3	-	աճ
Անգլերեն	-	7.8	-	7.7	-	աճ
Ֆրանսերեն		6		-		աճ
Գերմաներեն	-	9	-	7.8	-	աճ
Հայոց պատմություն	-	7.8	-	7.2	-	աճ
Ընդհ.պատմություն	-	8.3	-	7.6	-	աճ
Աշխարհագրություն	-	-	-	7.1	-	նվազում
Հանրահաշիվ	-	7.1	-	6.6	-	աճ
Երկրաչափություն	-	7.3	-	7.3	-	նույնը
Ֆիզիկա	-	7.2	-	7.5	-	նվազում
Քիմիա	-	7.8	-	7.5	-	աճ
Կենսաբանություն	-	8.3	-	7.6	-	աճ
Ինֆորմատիկա	-	8.4	-	8.5	-	նվազում
ՆԶՊ	-	8.8	-	8.5	-	աճ
Ֆիզկուլտուրա	-	8.9	-	8.9	-	նույնը
Ընդամենը	-	7.9	-	7.6	-	աճ

Աղյուսակ 8.

2021-2022 ուսումնական տարվա սովորողների պետական ավարտական քննությունների ամփոփ համեմատություն-վերլուծությունը 2020-2021 ուսումնական տարվա նկատմամբ/ մինչև 20միավոր,որը համապատասխանեցվել է 10 միավորին /

Առարկա	Պետական,ավարտական քննությունների միավորների միջինը 2021-2022 ուստարի		Պետական,ավարտական քննությունների միավորների միջինը 2020-2021 ուստարի		Փոփոխությունների դինամիկան / աճ,կամ նվազում /	
	9-րդ դաս.	12-րդ դաս.	9-րդ դաս.	12-րդ դաս.	9-րդ դաս	12-րդ դաս.
Հայոց լեզու	-	13.7/6.85/	-	13.8/6.9/	-	նվազում
Գրականություն	-	13.7/6.85/	-	13.8/6.9/	-	նվազում
Ռուսաց լեզու	-		-	-	-	
Անգլերեն	-		-	-	-	
Ֆրանսերեն	-		-	-		
Գերմաներեն	-		-	-	-	
Հայոց պատմություն	-	14.4/7.2/	-	9.4/4.7/	-	աճ
Ընդհ.պատմություն	-		-	-	-	-
Աշխարհագրություն	-		-		-	
Հանրահաշիվ	-	13.6/6.8/	-	12.9/6.45/	-	աճ
Երկրաչափություն	-	13.6/6.8/	-	12.9/6.45/	-	աճ
Ֆիզիկա	-		-		-	
Քիմիա	-		-		-	
Կենսաբանություն	-		-		-	
Ինֆորմատիկա	-		-		-	
ՆԶՊ	-		-		-	
Ֆիզկուլտուրա	-		-		-	
Ընդամենը	-	13.8/6.9/	-	12.6/6.3/	-	աճ

2021-2022 ուսումնական տարում 10-ից 12-րդ դասարաններում ուսման առաջադիմությունը կազմել է 100% , որակական առաջադիմությունը 10-րդ դասարանում՝- 41% / 7-10 միավոր /, 11-րդ-ում- 56 % / 7-10 միավոր /, 12-րդ դասարաններում՝ - 46% / 7-10 միավոր /:

Հաշվետու ժամանակաշրջանում 10-ից 12-րդ դասարաններում գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) կազմել է 193 աշակերտներից 32 աշակերտներ – 17 %, ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) կազմել է 193 սովորողներից 88 սովորողներ – 46 %, ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկը տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական տարեկան գնահատական ստացածների հարաբերությունը նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) կազմել է 60 աշակերտներից 59 աշակերտներ 98%-ը:

Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ (տոկոսի հաշվարկը 12-րդ դասարանի շրջանավարտներից միասնական քննություններին մասնակիցների թվի հարաբերությունը շրջանավարտների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) կազմել է 60 աշակերտներից 35 աշակերտներ 58%-ը: Ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ (տոկոսի հաշվարկը 12-րդ դասարանի շրջանավարտներից ավարտական և միասնական քննություններին անբավարար ստացածների թվի հարաբերությունը շրջանավրտների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) կազմել է 60 շրջանավարտներից – 2-ը՝ - 3.3%-ը:

Ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած ավարտական դասարաններ սովորողների ընդհանուր թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների) 60 շրջանավարտներից մեկը՝Եղիազարյան Լիլիթը կիսատ թողեց ուսումը և չավարտեց դպրոցը 1.7%:

Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկը հաստատության տվյալ կրթական աստիճանի բոլոր դասարանների դասամատյաններում գրանցված բացակայությունների գումարային թիվը արտահայտված ժամերով) կազմել է 193 սովորողներից 2239ժամ:

Ուսումնական տարվա ընթացքում տվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների (տոկոսի

հաշվարկը տվյալ կրթական աստիճանում տվյալ հաստատությունից տեղափոխված սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը նույն կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) **193 սովորողներից 5-ը՝ 2.5%:**

Տարածքային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկը տարածքային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թվի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) **կազմել է 193 սովորողներից 22-ը՝ 11.4%:**

Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկը մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թվի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) **կազմել է 193 սովորողներից 11-ը՝ 5.7%:**

Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը (տոկոսի հաշվարկը հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացածների թվի հարաբերությունը հաստատությունից մասնակիցների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) **կազմել է 1 սովորող՝ Հովհաննիսյան Էլիզաբեթը ռուսերեն լեզվից -0.5%: Ընդ որում նույն աշակերտը երկու տարին անընդմեջ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից պարգևատրվեց դրամական պարգևով 100000 դրամի չափով:**

Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկը 12-րդ դասարանի շրջանավարտներից բուհեր ընդունվածների հարաբերությունը 12-րդ դասարանի սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) **կազմել է 60 շրջանավարտներից 31-ը ընդունվել են բուհեր 52%, որից 14-ը կամ բուհեր ընդունվածների 45%-ը՝ ՇՊՀ, ընդ որում 6-ը՝ անվճար: Ընդհանուր առմամբ 2021-2022 ուսումնական տարում ՇՊՀ-ի ավագ դպրոցից ընդունվել են հայաստանյան բուհեր՝ ԵՊՀ- 5, Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան- 6 , ՀՊՏՀԳՄ– 6 շրջանավարտներ:**

2021-2022 ուստարում ՇՊՀ-ի ավագ դպրոցում աշխատել է 51 աշխատակից, որից 38-ը՝ ուսուցիչ , 32-կին և 6 տղամարդ, մանկավարժներից 3-ը՝ կենսաթոշակառու են, 14-ը՝ վարչատնտեսական աշխատողներ: Տարակարգ ունեն 4 ուսուցիչներ: ՀՀ Կառավարության վարած կրթական բարեփոխումների արդյունքում՝ ուսուցիչների կամավոր ատեստավորման և լրացուցիչ հավելավճար ստանալու

հնարավորությունից օգտվեցին դպրոցի 2 ուսուցիչները՝կենսաբանության ուսուցչուհի Ա.Իկիլիկյանը և հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մ.Վարդանյանը ովքեր բարեհաջող հանձնեցին իրենց քննությունները և սկսեցին վարձատրվել 1 դրույքը 200000 դրամի չափով, (մնացած ուսուցիչներինը՝ 121000 դրամ է) ինչպես նաև ստացան համապատասխանաբար դասաբաշխված ժամաքանակի 40%-ի հավելավճարը: Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական որակավորում: Դասավանդող ուսուցիչները տիրապետում են աշակերտակենտրոն, մասնակցային, համագործակցային, ինտերակտիվ մեթոդներին, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներին, համացանցին: Այս ամենը նպաստում է որպեսզի բարձրանա ուսուցման որակը և արդյունավետությունը: Դպրոցը միահերթ է և աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով: Դպրոցում առկա են 19 դասասենյակ, 4 ժամանակակից լաբորատորիաներ՝ հագեցված հարուստ մասնագիտական գույքով, գրադարան, համակարգչային երկու լսարան, ֆիզկուլտուրայի դահլիճ, մարզահրապարակ, ճաշարան:

2021-2022 ուստարում ՇՊՀ-ի ավագ դպրոցի ծնողական խորհուրդը սերտորեն համագործակցել է աշակերտական, մանկավարժական խորհուրդների հետ, իրականացրել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների զարգացման զանազան գործառույթներ՝ բարելավելու կրթության որակը, կրթական միջավայրը, ամրապնդել դպրոց- ուսուցիչ – ծնող- աշակերտ կապը:

Այդ առումով՝

1.Ծնողներն իրազեկվել են իրենց իրավունքների, պարտականությունների մասին:

2.Երեխաների դաստիարակության հարցում ամրապնդվել է դպրոցի և ծնողների միջև կապը, միասնական պահանջներ ձևավորվել մանկավարժների և ծնողների կողմից:

3.2021-2022 ուստարում զեղչվել է 23 սոցիալապես անապահով աշակերտների դասագրքերի վարձավճարը ՝ 121400 դրամ գումարի չափով:

4.Քննարկվել են դպրոցում սովորողների կարգապահության, հաճախումների, ուսումնական առաջընթացի հարցերը, ինչպես նաև ծնողական խորհրդի դերը դպրոց-համայնք համագործակցության շրջանակներում: